

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie *مجموعة علوم*

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏԵՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

Թիի 51

1899 ՄԱՐՏ 13

Ամեն Տեղի համար Տարեկան կպնիսիկ 50 դահեկան, Վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթասարի ծախքը հաճագորութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուցի տեղ 105 դրուց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՄԱՍԿԻՆԻՐԸ:

ՄԻՀՐԱՆ ՈՒՂԵԿԱՎԵՐՆ. — Մօրառանին Surl'Eau ին վրայ Ակնարկ մը:

Ղ. ԲՈՂԱՏ. — Խի ի՞նչ է սրտաճառը:

Ղ. ԲՈՂԱՏ. — Մեքենախօսական:

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ:

ԳԻՈՐԳ ՇԻՐԻՆԵԱՆ. — Կարծիքներ «գուրուտան»ի մասին:

Ղ. ԲՈՂԱՏ. — Նիքելազօծում: Պարզ Միսմաիս Մեռաղեայ Դրուագում:

ԱՐԱՔՍ. — Սոհանոցի Բաժինը:

ՄԱՀԱԳՈՒԺԵՐ:

Թերթօն Հանրագիտակի. — ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ (Ժիւլ Վէլն).

Թղթակցութիւն, Ազդ. Էլն.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ - Ալի Ճառտէսի, Թիւ 44

ՅԱԼԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մէկ քանի բաժանորդներու .

Վայելչապարգուծեան Բաժնին տակաւին չափաի կրնանք ձեռնարկել, քանի որ պէտք եղած թւով բաժանորդ արձանագրուած չէ ցարդ, գիտնալով որ մեր այդ ձեռնարկը օգտակար պիտի ըլլայ, իր հրատարակութեան համար տարբեր անօրինութիւններ ընել կը խորհուի. ուստի՝ առայժմ ամէն բաժանորդ ըստ առաջնայն պէտք է իր բաժնի գինը կանխաւ զրկել մեզ յառաջիկայ շրջանին համար, և երբ Վայելչապարգուծեան Բաժնի հրատարակութեան մասին որոշումները արտօնին, այն ատեն կը ծանուցանենք :

Չարաւսակ . Գ. Պ. Վ. — Նամակնիդ՝ ընդ այս և 55 դահեկանի նամակագրում ընդունեցանք . շնորհակալութիւն . Յաշատեօր կը զրկենք :

Պարտիզակ . — Է. Փ. — Նամակնիդ՝ ստացած ենք . թիւերնեղու մասին կատարած ուսումնասիրութիւննիդ և հետազոտութիւննիդ գովելի է . մասնաւոր նամակ գրած ենք :

Զիպա . — Ընդունեցանք նամակնիդ, արդէն զրկած ենք 1—26 թիւերը . շնորհակալութիւն :

Քէտապ . — Վերջին նամակնիդ ստացանք . արդեօք յառաջիկայ Մարտ ամսոյ առաջին թիւերէն պէտք ենք զրկել, թէ անցեալ տարուան . մասնաւոր նամակ պիտի գրենք :

Գարթալ . — Ե. Յ. Է. — Դրամը ստացանք . բաժանորդ գրեցինք . հարցումնուդ գոհացուցիչ պատասխան կը տրուի մասնաւորապէս :

Պանոսիա . — Ա. Մ. Ստացանք Բիւզանդիոնի խմբագրատունէն 175 զր. շնորհակալութիւն :

Խօսուելի . — Ստացանք 38 դահ. շնորհակալութիւն . նամակ զրկած ենք :

Բարիզ . — Տ. Տօլրամաճեան Էֆ. — Անցեալ չարթու զրկեցինք նամակ և ընկալագիր . վերջի քաղթերնիդ ստացած ենք :

Պրուսա . — Տ. Պօղաճեան Էֆ. — Նամակնիդ ստացանք . թիւ 45ը երկրորդ անգամ ըլլալով զրկած էինք . տես Հանրգ. թիւ 49 . թղթից . կրկին կը զրկենք :

Մալաթիա . — Յ. Թ. — Նամակնիդ ստացած ենք . շնորհաբաժնեան վրայ գրել անշուշտ պիտի չարունակենք, որովհետեւ այդ ճիւղը մասնաւորապէս գաւառներու համար օգտակար և անհրաժեշտ կը նկատենք . նոյն-

պէս և ներկարարութիւնը . բայց դիտէք որ ամէն բան կարգով կ'երթայ . առ այժմ կը պատասխանենք կարգ մը հարցումներու , որոնք իրենց կարգին օգտակարութենէ գուրկ չեն :

Տիւրիկ . — Արթ. Գ. Ս. Ա. — Գետնախնձորի մշակութեան վրայ ընդարձակօրէն գրած ենք թիւ 27էն մինչև վերջ 38 , շարունակաբար . մասնաւոր նամակ պիտի գրենք . դասագրքերու համար դիմեցէք Ազգ. Պատրիարքարան :

Իւլիսա . — Գործակալ . — Վերջին նամակնիդ առած ենք : Թիւ 40 , 41 , 42 , 43 , 49 , 50 կը զրկուին :

Ա. Զ. Դ

ԳԱՂ. ՀԱՅ - ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԻՄԷՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Սոյն բառագիրքը կը խօսի աշխարհիկ լեզուով և գործնական ոճով խօշկութեան , Վիրաբուժութեան , Առողջաբանութեան , Հարտարարութեան , Բնարանութեան , Քիմիայի , գեղերու . Բնական պատմութեան , Աստղաբանութեան , Լրկագործութեան և այլ գիտութեանց վրայ :

Ըստ կարելոյն ամենայն խնամք տարուած է բառերու ճշգրտութեան : Ընդարձակ բացատրութիւններ կուտայ իւրաքանչիւր նիւթի վրայ , ի բաց առեալ ամէնէն անգործածական նիւթերն . իսկ կարեւոր նիւթոց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք անպակաս են : Այս աշխատութիւնը որպէս զի , ինքեան կատարեալ ըլլայ , հեղինակը ~~ան~~ առաջնորդ բռնած է շատ մը հանրագիտական ան բաւարարներ :

Գիտական բառերու մասին առաջնակարգ թիւերը եղած է այս գործի վ. Հ. Քաջուռոյ Հանրագիտութեան ընդարձակ բնարանագիրքն , իսկ բուսոց մասին վ. Հ. Ալիշանի Հանրագիտութեան վերջոյ չէ համարուած գիմերու նաև մասնաճիւղերու վրայ խօսող գրքերու օգնութեան :

Հեղինակը խնամօք եւրոպական ընտիր գործերէ քաղելով ամենէն գործնական և օգտակար գիտութիւններն զանոնք խմբագրած է մի հատորի մէջ՝ զարդարելով ամէն ճիւղի վերաբերեալ գեղեցիկ պատկերներով :

Սոյն գործը պիտի լրանայ 50 ութնածալ թերթերու մէջ , իւրաքանչիւր թերթի երկայնութիւնն է 2½ հարիւրորդամբար , լայնք 16 հրմ . գրերն մանր և գիւր ընթեռնի :

Իւրաքանչիւր թերթի բաժանորդներն է 20 սանթիմ , ամբողջ գիրքն 10 ֆրանք (— 4 բուլլի , 2 տուար) զոր կանխիկ ներփակեալ տոմսակաւ պէտք է փափաքողն յէ առ Տեսչութիւն վենետիկի Միթարեան Տպագրատան . ապահովագրեալ նամակաւ եթէ կ'ուզէ ընդունիլ թերթերը :

Թերթերն կը զրկուին հինգ հինգ իւրաքանչիւր անգամ : Խուսափողն և Տաճկաստանի համար յայտնի է թէ լուսագոյն է յանձնարարականաւ (recomandé) զրկել . առ այս փափաքողն պէտք է 25 սան

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՐԱՌԳՐԱՊԵՏ - ՏԵՌԻԷ

Ղ. ԲՈՒՍ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻ 51

1899 ՄԱՐՏ 13

“ՀԱՆՐԱԳԻՏԱԿ,,Ի

ՀԱՍՏԱԿԻՐՆԵՐԸ

Պարսից Ազգային Թերթերու Ընդհանրապէս Համակիր Կազմատահայ պարբերական նշանաւոր Հանդէս մը, Մուրճ, Հանրագիտակի նկատմամբ յայտնած է յետագայ խմբագրական գաղափարներ, որոն նկատմամբ մեր փախադարձ գրական համակրանքն յայտնելով հանդերձ, կարատապէնք դայն, ոչ իբր անձնական, այլ իբրեւ հանրային զգուցման ու մտածման պաշտօնական թարգմանութիւնը և իր ամենաւն ըմբռնելի խնայտովը:

ՀԱՅԱԿԱՆ ՄԱՍՈՒՆԸ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ. — Լրագիր (չարաթաթերթ) գրական և գիտական. խմբագրատեւ Ղ. Բուլատ: Կ. Պոլիս: Բաժնեգին Թիւրքիայի համար տարեկան 50 դահեկան, այլ երկրների համար 15 Փ. (=6 ու.): Այդ անուն թերթը որ բնաւ ծանօթ չէ կովկասեան հայերիս, Սոհանայի Բաժինը. — Նամակներ և հարցում

հրատարակում է մօտ երկրորդ տարին (մինչև այս յունուարի վերջը հրատարակած է 41 համար): Մեզ հասած այս տարւայ առաջին համարները կարելիութիւն են տալիս յայտնելու, որ այդ թերթը իւր տեսակում միակն է մեր մամուլի մէջ և թողում է շատ նպաստաւոր տպաւորութիւն: Թերթի խորագիրը (լրագիր գրական և գիտական) բաւականաչափ ճիշդ գաղափար չէ տալիս իւր ոչ պակաս օգտակար բովանդակութեան մասին. նա բնաւ «գրական» չէ, այլ միայն գիտական է, և աւելի ճիշդը՝ գործնական-գիտական կամ արհեստարանական, որին արդարեւ հայ ազգը մեծ կարիք ունի: Ահա, օրինակի համար, մեր ամենավերջը ստացած համարի (թիւ 45) բովանդակութիւնը.

Խմբագրական. — Մատենադարան. — Հ. Ս. Երամեանի «Գործնական գիտութեանց Բաւարանը»: — Ղ. Բուլատ՝ Մազկերանական պէտախութիւններ. Վարդը. Մշակութիւնը և Իսկութեան պատրաստութիւնը: — Ղ. Բուլատ Շերամարումութիւնը Պատգորեան զրու-թիւնով (=մեթոդով): Մակարումային փոխանցիկ հիւանդութիւններ. Փատիտ (Ֆրաչչի): — Ներ. Գ. Նիկողոսեան՝ Բաժնարանական՝ Բոյսերու վերարտադրում: — Ղ. Բուլատ՝ Ներկարարութիւնը. Բուրդ: — Տանաթիկներ: — Սոհանայի Բաժինը. — Նամակներ և հարցում

ներ առ խմբագրութիւն: — Տ. Պօգոսեան՝ Արքիմէդէսի լծակը: — Թղթակցութիւն, Ազգ. և այլն:

Առաջին համարների ընթերցումից երևում է որ Պ. Բուրատ, որը թերթի խմբագիրը լինելով նաև նորա գլխավոր աշխատակիցն է, լուր նախապատրաստութիւն ունի իր ստանձնած գործի համար: Եւ ոչ միայն գործնական գիտութիւն է ծառայում այդ թերթի մէջ, այլ և աշխատակիցների ու թղթակիցների ձեռքով արւում են թիւքիայում և այլուր եղած արհեստների մասին չափ օգտակար տեղեկութիւններ, ստույգ տարբերութիւններ: Աւելցնենք որ թերթի լեզուն մաքուր հայերէն է, դիւրամօռնելի բայց և ճիշդ գիտական:

Թերթի ամեն համարը 16 երկսիւն մեծ էջերից է բաղկացած:

Ձերմագին յանձնարարում ենք նաև Ռուս-Հայոց Հասարակութեան ուղարկութեանը այս օգտակար թերթը, և գէթ արհեստագիտական և հայոց թեմական զարգացնելի և այլ գիւղ ու քաղաքների գրադարան ընթերցարանները անհրաժեշտօրէն պէտք է բաժանորդ գրեն նորան: Նոցա հետ կարող են միանալ նաև արհեստների (այլև պարտիզպանութեան, երկրագործութեան) նախաձեռնողի անհամերը:

ՄՕԲԱՍԱՆԻ Sur l'EauՆ ՎՐԱՅ ԱՎՆԱՐԿ ՄԸ

Շար. Նախորդ թիւէն

ԱՌ. ԵՂԻԱ ՏԵՄԻԴՅԱՆ

Ես աւելի անկեղծութիւն, աւելի laisser aller կը տեսնեմ Sur l'EauՆ կալմ.դ այն 8 էջերուն մէջ, զորոնք Մօրտոմն՝ զրօտանալին մէջէն կամ երկնքին կապոյտ անհունին տակ, փրկիւնցող ծովափին մօտ կամ լուսնակ գիւղերին, միտ միծակ, մենուկ ժայռի մը վրայ, նստած գրած է: Հոն սպառնալիքներ կան, որոնք կը ցնցեն, գունազեղ նկարագրութիւններ կան, որոնք կը թովեն, հոն ներշնչում կայ, հոն ետ կայ: Առաջին էջը ամբողջ զմայլանքի սղօթք մըն է Բնութեան

սիրահար զաւկի մը, որ իր կեանքը թափառիկ թուցիկ մը նկատելով պահ մը՝ աննման ծովի մը, մշտադալար ափունքներու, կըղկեակներու, անհուններու վրայ բարձրացած, նկարչութիւնը կ'ընէ բոլոր յուզող տեսարաններուն, պահ մը անոնց կեանքն ապրելով: Գիրքն է մէկու մը որ մարդոցմէ զզւած, հաճոյքներու տափալուծեմէն գանաձեռ կեանքին միջակութեան համար տրոնջացած է, և գացած է լուին մենութեան մը մէջ իր դժգոհ նայուածքը պատգուներ լողոր այն բաներուն վրայ, որոնք զինքը պաշարած էին, որոնց վրայ արգահատած էր վերջը, և զորս սրտի ծաղրէր հիմա:

Հոս՝ փայլուն ու կեղծ կեանքն է որ դիւրին ու պերճ՝ Բաբի յաւերժապէս գարնանային երկնքին տակ, կը տաճի, կ'անցնի, ամէնքն ալ իշխան, դուքս են հող: Հիւանդներ ալ կան, որոնք սակայն նախանձելի մահով մը կը մեռնին: Հոն՝ բարձր տիկնոջ մը որտեղներուն մէջ փառքով մօտ՝ ու ստուերի պէս անկէ դուրս սողացած երաժիշտ մը, գրադէտ մը կամ նկարիչ մըն է: Առջին, մարդն է դարձեալ, ամէն, անհամեմատական անդամներով տգեղցած Բ. Բ., հին գեղեցիկ հէլէններու կամ հսկայ հուովմայեցւոյ ուղարկելի հակադրակերը, և անդին, պտույտի մ'ատեն, զառիվերի մը գագաթը, «Իրենց երազովը գինով երկու սիրահարներ» են, որոնք մեծ վիպասանին մօտէն կ'անցնին, առանց զինքը տեսնելու:

Բայց այս չէ ամէնը: Կեանքին բոլոր ձեւերը, պայմանադրական կամ մենաշնորհաւ, կ'երևին հող: Երկու հիւանդ կիներ, զորս խնամել կ'երթայ, մաւրացիկ մը, որուն կը կարեկցի, գրագիր մը, որ յոյսերով կը մանէ պաշտօնատուն մը և մեռնելու մօտ կը թողու զայն, պսակադրութեան հանդէս մը եւ կեղեցիկն մէջ, և բոլոր այն կարեւոր կամ միջակ շարժումները, որոնք տարածուելով, ընդլայնելով ու մեծնալով՝ մարդկային ընկերութիւն մը կը կազմեն:

Ընկերութիւնը, կ'ատէր զայն: Ձիւքք չէր գրողեցներ, չէր շահագրգռեր այդ ընկերութիւնը, զոր խորհրդաւոր, գծիւմ, խորին, խարուսիկ կ'անուանէր: Եւ ընդհանուրէն մասնաւորը իջնելով, կանգ կ'առնէր ոչ նուազ

խիտ, ոչ նաւադ ծաղրանկարային շարժու-
մով մը, բարեկամութեան իմաստին առջև:
Բարեկամութեան խոտապահանջութիւնը,
պայանադրական բռնի ձեւը կը նեղէր զին-
քը: Չէր հասկնար թէ ինչպէս կարգ մը մար-
դիկ առանց զիրար ճանչնալու, առանց նոյն
խի իրարու երես նայած ըլլալու, կրնային
մտերմանալ: Ու յետոյ, չէր կրնար ըմբռնել
թէ մարդ մը ինչպէս և ո՞ր իրաւունքով իր
բարեկամին գործերուն, պաշտօններուն,
ներքին պէտքերուն կամ նոյն խի ընտանե-
կան յարաբերութեանց կրնար միջամտել: Ու,
խորին դիտողի մը նրբամտութեամբ, ուր հո-
գերանական հեգնոտ ձև մը կ'ուրուագծի,
կ'ըսէր այդ տեսակ ո՞ր և է բարեկամի համար.
—կարծես թէ ըսել ուզէ. «Հիմա քիչ մը ինծի
կը պատկանիք: Դուք բան մը կը պարտիք
ձեռնէ, ձեր կեանքէն, ձեր մտածումէն, ձեր
ժամանակէն»:

Ու տեղ մը, աղամանդ երազի մը չհառ-
նողի տիտուր ու մռայլոտ համակերպութեամբ
կ'աւելցնէր. «Ամէն բանի բաղձոյցի առանց
բան մը վայելելու»: Ստորմանեան երգերէն
ցաւի կտոր մըն էր առ կարծես: Իր կեանքը,
ուժը, խելամտութիւնը անբաւական կը գտ-
նէր: Ինչո՞ւ չկարենար ճանչնալ իրականու-
թիւնը հաճոյքներուն, սպասումներուն, հեշ-
տանքներուն: Թո՛ղ չնախանձին մեզի, կը-
սէր, ոչ մեղքնա՛ն, և բաղդատութիւնը
կ'ընէր գրական և սովորական մարդուն մի-
ջև: Իր սրտի ցաւը ասղնտող, սո՛ւր, անհուն
էր սրտածնիկ տեսարաններու և երևոյթնե-
րու առջև. առոյգ, երկաթ կուրծքին խորը
պահու ըտող բլրերգի կտոր սիրտը՝ փետուրի
մը չափ թրթռուն և անուակի մը նման մըր-
մնջող՝ սա սողերը կը ներշնչէր տրտման
իր մտքին. «Իրա՞ն այսպիսի բաներ կը պա-
տահէին, թէ մարդ ասանկով կը մեռնէր: Ես
ասկիայ պիտի չմտնամ, ինչպէս ուրիշներ ալ,
որանք ինծի քստել տուած են աշխարհը»:

Եւ իր նայուածքը՝ մտածումին հետ հե-
ռուն, կասկայտ հորիզոն մը կը փնտռէր: Չէր
կրնար երկար ատեն մնալ, ոչ ալ լսել ու
ցաւագին, տրտում տալու տրտութեանց անձու-
կին հետ: Ամբողջ բուրաստան մը կը բաղ-
ձար տեսնել իր շուրջը, անհամար ծաղիկնե-
րով զարդարուն, մշտապէս կապոյտ երկնքի

մը տակ, և իր լաւատեսութիւնը (*) կ'եր-
կնար մինչև արեւելքի երկիր մը՝ «որ առանց
տրտութեան կը քնանան, ուր առանց ցաւի
կ'արթնան, ուր անհոգ կը շարժին, ուր ա-
ռանց փնտրութեան կը սիրեն և ուր մարդ
հազիւ իր գոյութիւնն ունենալը կ'զգայ»:

Երջանկութեան հրափառ համբոյր մը
հնչելով կ'իշխար իր սրտին մէջ. Եւ, անդի-
մադրելի բաղձանք մը կը ծնէր հոն հիմայ՝
առանց վշտի, անքոյթ, պահեմական կեանք
մ'ունենալու: Իր երազը սակեհու էր. արի-
ւելեան ճաշակով բնակարանի մը կը ցանկար,
ուր իշխանական պերճութեամբ չքեղ սրահ-
ներու մէջ, միտ մինակ, Զահէին գինովցնող
հեշտանքին հետ, իր կեանքին մետաքս օրե-
րը մանէր: Երազը, կրքին հետ եզրայրա-
ցած, տակաւ կուրծքին տակ կը մտնէր որ
կ'ուռնար, կը ծփար, կ'ալեկոծէր: Հոգ, այդ
կակուղ բազմոցներու ծոյլ փորձականութեան
մէջ, կը փափաքէր վայելումն ունենալ աչ-
խարհի հինգ ծագերէ բերուած հինգ հրա-
շակերտային կրկերու: Ամէն բանէ հեռու,
մարդերուն նախանձոտ նայուածքներէն և
միօրինակ, տաղտկալի իրերու անհանդուր-
ժելի սափակութենէն, ստրուկներու, գերի-
ներու, ճորտերու հաւատարիմ ծառայու-
թիւնը իր հրամաններուն տակ, ահաւասիկ
կեանքը, որուն իրականացման համար յօժա-
րակամ իր երեսը բիւր անգամ հողին պիտի
քսէր:

Բայց երբ կ'արթննար, երազը թռած էր:
Ան ատեն, դարձեալ, ընկճող, թաղծա-
գին մեղամաղձութիւն մըն էր որ հոգիին վը-
րայ կը ճնշէր: Այլ չէր կրնար սուգին ցանցէն
փրկել իր ցաւատանջ, խաբուող հոգին: Հա-
ճոյք կզգար, անմեկնելի, տարտամ, անգութ
հաճոյք մը՝ տառապած ըլլալուն: Իր անորոշ,
դեղեւեկոտ քայլերուն ծուլութիւնը կը ոլը-
տըցնէր այն ատեն ջուրի մը եզերքը կամ
անտառի մը մէջ, ուր ամբողջ աշուն մը կը
հեծկոտար: Եւ իր աշուն հոգին եզրայր կը
գտնէր բնութեան մեծ աշնան հետ: Մտքին,
սրտին գերասուր անկիւններուն մէջ, բնու-
թեան անվերջ լացը, հողմակոծ մանչիւնը,

(*) Եթէ ոչ՝ երեւակայութիւնը:

ծառերուն, տունկերուն, ծաղիկներուն մէջն՝ արձագանգ կը գտնէին: Գեղին բուսականութիւնը որ իր շուրջը կը տարածուէր, բոսորագոյն դաշտի մը փոխուած կը տեսնէր: Եւ իր ցաւած երեւակայութիւնը, որածայր վիշտերն ա՛յնչափ կը խորնային՝ որ պահ մը ծառերը վշտակիր մարդեր կը կարծէր:...

* * *

«Երազանքի այս օրագիրը միայն ինծի համար գրեցի» կ'ըսէ Մօրտաան. «Բան» ի խաղաղամեծին կարճ մէկ նկարագրութիւնը ընկնէ՝ որով և ամբողջ գիրքը աւարտելէն վերջ, ըստ իս, բնաւ գիրք մը այսչափ մեղի համար գրուած չէր կրնար ըլլալ: Թէ և «առանց շարունակութեան, առանց շարադրութեան, առանց արուեստի» երեւներ կ'անուանէ ինք՝ ԼՂերն այդ պարմանալի գրքին, բայց մեղի ուրիշ բան չի մնար եթէ ոչ՝ հիանալու լուր: Նկարագրականը, զգայականն ու տեղականը հաշտուած, ներդաշնակուած են հոն: Երգը՝ աղագական է մարդու մը՝ որ խաբուած, վիրաւորուած է, առանց ուզելու որ խաբեն, վիրաւորեն զինքը:

Շատ սիրտ ու շատ կեանք կա՞յ այդ նիհար էջերուն մէջ. հոն սողորկ կայ, հոն պատկերներն ճղ կան ցուրտ կամ բաղձարի մահերուն: Հոն նոյնացած է կրքոտ մարդը գրողին հետ, որ մերթ փոք բանաստեղծ մըն է եղած իր երազներուն, իր քննարկներուն, իր բաղձանքներուն համեմատ: Իր արշաւանքին ատեն, որով մանկեղծ բարձրագոյններու թռիչք մըն է, որ կը սուտունի դէպի վեր, որ իր ստուերստ ցաւը կը ծաւալէ մրտաճումներու էջին մէջ և ուր հոգին՝ անվերջ հակամարտութիւններու մէջ սեղմուած, դէպի Մայր-Բնութիւնը ցաւագին համբոյր մը կը զրկէ:

ՄԻՋՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

ԹԷ ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ

Ա.

Անցեալ չարթն, Հանրագիտակի մէջ «Գրանդանակն աշխարհից» վերնագրով վիճակագրական յօդուած մը արտատպած էինք կովկասահայ Տարազ Թերթէն. եթէ մեր մասնաւոր ուշադրութիւնը կը դարձնենք անոր վրայ, պատճառը այն է որ, Յարգոյ Խմբագիրը հոն կը դանդաւար. Ռուսահայոց ընթերցասիրութեան մասին ունեցած անտարբերութեան՝ և մասնաւորապէս անոնց ձրի ընթերցասիրութեան փափաքին վրայ. և ծոյս իրական արտայայտութեան առջև է որ մեր զարմանքը չենք կրնար բռնել, մտածելով որ՝ հոն ալ մակարոյծ-ընթերցասէրներ ոչ թէ չեն պակտիր, այլ և կը վիճան, թէ ձրի ընթերցասիրութիւնն է որ աւելի կը փոքի, քան կանոնաւորապէս և պարտաճանաչութեամբ վճարուած ընթերցասիրութիւնը:

Մեր, Տաճկահայոց մէջ՝ մէկ կողմ թողլով այն մակարոյծ-ընթերցասէրները, որոնք իրենց նիւթական վիճակի բերմամբ արգանդանալի բան մը կ'ընեն և իրենց այս վարձուքին մէջ, և մարդ զանաւոր մեղադրելէ աւելի՝ ներդաշնակուած կը նայի անոնց: Բայց ի՞նչ ըսել. պէտք ենք այն՝ կարգ մը մակարոյծ-ընթերցասէրներուն համար, որոնք շատ մը անհետեւ և իսկապէս անպէտ բաներու համար միշտ առատօրէն դբամ կը գտնեն, և առանց խղճահարութեան ալ կը վճարեն, ու երբ կարգը ըստդրի կ'ոմ ու է հրատարակութեան մը համար վճարելու գայ, կը դժկամակին, և իրենց համար ամենէն անհանգուրժելի հարկը կը դառնայ: Իժարադարար անուրանալի և ցաւալի ճշմարտութիւնն է այս՝ համաճարակի մը պէս տարածուած, զոր Տարազ ալ ոչ նուազ ցաւով ու զայրութով մէջ բերած է Ռուսահայերու նկատմամբ մասնաւորապէս:

Քայց ի՞նչ է արդեօք առ հասարակ-հայ ժողովուրդին մէջ տարածուած ուսման և ընթերցասիրութեան մասին այսփառա-ծածոթ մտայնութեան պատճառը: Աւելի բանական և օգտակար չըլլար արդե-օք, փոխանակ ցաւերու, դանդաղութեան կամ կշտամբերու, այդ համաճարակի հի-ւանդութեան միջոցով փնտռել գանել, և զայն անէացնելը:

Պրպանք յըջօրէն ուրեմն, քանի որ ինդքայն ձեռնամուխ եղանք:

Եթէ մեր թրքահայերու մէջ ընթեր-ցասիրութիւնը քահայտեցիչ փնտի մը ջոնքի, մենք պատճառը պիտի վերա-բրենք զխառնորակէն մեր վարժարան-ներու անկանոն վիճակին, յախուռն ըն-թացքին, և ոչ թէ ժողովուրդին իրեն, որ ամէն լաւագոյն և իմաստուն բանի փափաքող է միշտ: Մեր վարժարաննե-րու անկանոն վիճակին կը վերագրենք, որովհետեւ մեծ մասամբ՝ եթէ ոչ ամենը, պատշաճ ծրագիր, ձեռնհաս վարիչ և կա-րող ու առակ ուսուցիչներ ունենալու մա-սին նուազ բողբուսի երած են անանք: Ինչպէս որ այս մասին հեղինակութիւն ունեցող հանրային նշանաւոր անձնաւո-րութիւններ, իրենց գանգատն ու ցաւը յայտնած են, և միշտ դարմաններ խն-դրած՝ իրենց անձնական թէ՛ հրահրա-կոյնի յայտնութիւններով: Վկայ են այս մասին՝ մեր քուրդ պարբերական հան-գէտներն ու օրաթերթերը, ինչպէս նաե-րովոր մեր մայրաքաղաքի թէ՛ նահանգ-ներու դպրոցական վերին հսկողութիւնն ստանձնող շատ մը պաշտօնէից արձա-նագրութիւնները սկիզբէն մինչև այսօր:

Ուստի՝ անիրաւ անդը չէ որ ժողովուրդի վրայ ծանրաբեռնուած այս ան-ընթերցասիրութեան պատճառը դպրոց-ներու սեմէն ներս կը փնտռենք: Իրա-պէս ի՞նչ է որ մեր դպրոցներու այժմու վիճակը: Կրնա՞նք ճշդօրէն արագ նպատ-տաւոր պատասխան մը տալ:

Տղան վարժարան կը յաճախէ բուն մը սովորելու նպատակով կամ յայտով. բայց

ի՞նչ է սովորածը. ասիկա ոչ ոք գիտէ: Զի՞ մի որ ընթերցասիրութեան ճաշակը դպրոցի մէջ կը կրթութեան ճաշակի, քան այլուր: չէ՞ մի որ տղայացի ի՞նչ կրթ-թութիւն տանք, անոր անդեցութիւնը նուազան կը մնայ իրենց վրայ: չէ՞ մի որ մարդ իր գանգած միջավայրին ազդե-ցութիւնը կը կրէ միշտ: Արդ՝ մեր դպ-րոցներու մէջ սովորութիւն կայ «ան-հրաժեշտը» տնտեսի, և «անաչաւը» նա-խադասել. ուսմանց «պաշտօնական և օ-րինաւոր» ծրագիրը արհամարհել, և գիտլածային կամ քանհաճ գաղափարա-կութիւն մը տալ: Զոր օրինակ, այս ինչ վարժարանի մէջ աւելի յայտնար կը գա-տեն, քանհաճ տնօրինութեամբ, տա-ղաչափական գաղափարութիւններով տղուն վերանցական անարտաճ գաղափ-արականութիւն մը տալ, և անոր ապագան մեռցնել, քան հիմնական և հայի խնդ-րոյն հետ ազգակի կոտորակութիւն ու-նեցող լաւամիտ և բարձր կրթութիւն մը տալով, զայն գործնական և օրուան մարդը ըլլալու պիտրատել:

Եւ կամ անդին՝ «տեւորակամ» չըս-ցուցիչ անունին տակ, ուսուցիչ տար-փոխներով (ռէքթօր) տղայներ կրթելու կեննեն Մեդրասէն և Ռակեդարու ինք-նադից ներքինյացուցիչներ, որոնք չեն ե-ղած այն՝ ինչ որ սովորէն դարու իրա-պէս ներկայացուցիչ հեղինակի անուն մը կցարեւելու արհաւիրելու ըլլալու ուղած են. մտածանք՝ այդպիսի հաստատու-թեան մը վտանգ զլուխին արեւմտեան և ո՛չ մէկ լեզուի վրայ տեղեկութիւն չու-նենալը մէկ հարկ թողլով, հայերէն իսկ չը գիտնալը լո՛ւք մարդ, ակամայ կը փոր-ձօթի ընել անշուշտ թէ, մեր ժողովուր-դի այս տնքնթերցասիրութեան միջոցի բոյնք, մեր վարժարաններու մէջ է: Արդ՝ ի՞նչպէս կ'ուզէք որ այդ դպրոց-ներէն չըջանաւարտ ելլող տղայք, իրենք զիրենք օգտակար ընթերցանութեանց նուիրեն, քանի որ առ այդ՝ չեն նախա-պատրաստուած իրենց մարդը փարող-

ներէն: Այսպէս՝ մին տաղաչափ է (թէեւ չափն ու տաղը ինչ են առանց գիտնալու), կարգացած թերթերէն համ չառնել, միւսը հայերէն չէ՝ սովորած՝ (ուրիշ բան սովորած է արդեօք) որ թերթերու պարունակութեանց միայնք հասկնայ, հեռակարար և, ո՛չ հաճոյք կ'զգայ չը գիտցած նիւթէն, և ո՛չ իսկ կրնայ օգտուիլ չզգացած բանէն. ու թուղթ մտաւէ, թուղթ կարգալէ աւելի, թուղթ խաղալով իրենց ժամանակը ոպանելու մնլութեան մէջ կը փնտռեն իրենց հաճոյքը, ինչպէս անցեալները կ'ըսէր Գրասէր Ասում՝ ինք՝ որ թէ՛ իբր Պոլսեցի անուանի ուսանող և անուանի ուսուցիչ, զոր մօտէն և հոգեբանօրէն սնդամազնած է մեր դպրոցական արդի շատ մը վերանորոգմանց կարօտ պակասալիւր կողմակերպութիւնը, զոր յաճախ խիզախօրէն քննադատած է ամէն անգամ որ առիթը ներկայացած է, իր ծանօթ՝ հրայրքով լեցուն սուր գրիչով:

Անշուշտ՝ կը հասկցուի թէ, մենք այս տողերը գրած ատեննիս, անձնաւորութիւններ վիրաւորել չէ նպատակնիս. վասն զի՝ մեր գործը չէ թէ անձի՝ այլ գաղափարի հետ է. և մենք յատուկանուններու հետ ալ խաղացողներ չենք, այլ աւելի սկզբունքներու դաւանող: Սակայն երբ կարգ մը մարդիկ դպրոցներու ուսուցիչ կամ վարիչ՝ հոնրային բարձրագոյն կամ խոնարհագոյն կըթուութեան անունով պատուախանատու պաշտօն կ'օտանձնեն, և փոխանակ հանրային կըթական բաղձանոց ու յոյսերու համապատասխան, բարի մարդերու, արի քաղաքացիներու ընտիր սերունդներ պատրաստելու, Ազգին ու ժողովուրդին երեսն ի վեր ու վար կը նետեն համբաւներու, իմաստակներու անձկամիտ ու ճամարտակաբարոյ թերուաներու, շարքնթացիկ (քօնիկ) աղէտներու դասակներ, որոց մասին ամէն օր հանրային մամուլը և լրջախոհ ու լուսամիտ ծնողներ, սուր ու կծու գանգաւաններ կը տե-

ղան աղաղակող շեշտերով, և խորենացիական ողբերով: Այդ ատեն, իբրև հրապարակագիր, և հանրային զգացմանց ու մտածմանց իբրև հաւատարիմ թարգման, մեր պաշտօնին բնութենէն ու պարտաւորութենէն թելադրուած, կը հարկադրուինք քննադատութեան խաղաղանն ի ձեռին, մեր բողոքներու ձայները բառնալ ապիկար կըթիչներու, և ապականարար կըթարաններու դէմ. ինչպէս չը պիտի քաշուինք երկեք, բացասիրտ յայտնելու մեր համակրալիւ քաջալերանքը՝ մեր կարող ուսուցիչներու և բարեկարգ ուսումնարաններու նկատմամբ, որոնք՝ են և պիտի ըլլան մեր կըթական իսէպլի իրագործող մեծ հոգիները, և Ազգին իրական մարդասէր բարեգործները:

Լ. ԲՈԼՍ

Մ Ե Ք Ե Ն Ա Ի Օ Ս Ա Կ Ա Ն

(Երբեք-Երբեք ԳԻՆ 50)

Բայց այս ծայրագոյն տատկաններուն մէջ, միջին մը ունիք էր գտնել, որ այս հաւատար ծառալի տակ այլ և այլ նիւթերու կշիռներուն թաղաթութիւնը, կամ իրարու հետ ունեցած համեմատութիւնը կատարուէր Ու այս՝ ամէնէն յարմարագոյնը գտած են ջուրը, որ ըստ ինքեան՝ արդէն կշիռի միութիւնը՝ ԿՈՒՍՄԸ կը ներկայացնէ, և կազեղէն նիւթերու համար ալ օգլը: Պարզէնք ըսածնիս: Ենթադրենք որ, այլ և այլ կարծի մարմինները կանոնաւորապէս տատնորդամէթը խորանարդի ձեւով տաշուած են. այսինքն՝ նարտի խոշոր քուէի (թավլուի վար) նման, որու իւրաքանչիւր կողմը 10 հար. մէթը (տանդիմէյր) երկայնութիւն ունի. և հեղուկ մարմիններն ալ չափուին մէկ լիթրա՝ կամ որ նոյնն է՝ մէկ տասնորդամէթը խորանարդ պարունակութիւն ունեցող ամանի մը մէջ: Եւ

բոլոր այս միաձառալ մարմիններն իրարու ետեւէ կշռելով, պիտի տեսնենք որ, կլոր հաշուով, կապարը կը կշռէ 11 քիւօ. բւաթիւնը 22՝ երկաթը 7՝ ևն: Թէ բոլոր այս մարմինները ջուրէն աւելի ծանր են որ իր կարգին ճիշտ 1 քիւօ կը կշռէ: Բայց պիտի գըտնենք անոնց մէջ նաեւ մարմիններ, որ ջուրէն աւելի թեթեւ կշռեն. ինչպէս՝ փճենիի (կլարկէն) փայտը՝ որ 850 կռամ, սուսկը՝ 240, ալքոլը՝ 806 կռամ, ևն. ևն: Ուրեմն՝ պիտի ըսենք թէ՝ միեւնոյն ծաւալի տակ՝ կապարը ջուրէն 11 անգամ աւելի ծանր կը կշռէ, բւաթիւնը 22 անգամ. ևն: Պիտի ըսենք նաեւ թէ, հաւատարմ ծաւալով փճենիի փայտը ջուրի ծանրութեան 850 հազարորդն է. սուսկը՝ 240 հազարորդն է ևն: Արդ՝ այս հաւատարմ ծաւալով այլ և այլ նիւթերու կշիւը՝ ջուրի կշիւին հետ բողբոջատելէն յառաջ եկած վերայիցեալ թիւերը, 11, 22, 7, 0,850, 0,240, 0,806, ևն. որ ո՛չ քիւօ. և ո՛չ ալ կռամ կը ցուցնեն, այլ՝ կապարը, բւաթիւնը, փայտը, ալքոլը, ևն. միեւնոյն ծաւալով ջուրէն քանի՞ անգամ աւելի կամ պակաս կշռենին կը ներկայացունեն, կը կոչուին իրենց համապատասխան մարմիններուն «տեսակարար ծանրութիւնը կամ խտութիւնը»:

Որովհետեւ գիտունները արդէն ժամանակին փնտռած և գտած են մարմիններու տեսակարար ծանրութիւնը, օգտակար կը սկսենք ստորեւ ներկայացնել, որ կը ծառայէ մարմիններու իրական ծանրութիւնը գտնել, երբ անոնց ծաւալը մեզի ծանօթ ըլլայ. կամ փոխադարձաբար, ծաւալը գըտնել, եթէ ծանրութիւննին յայտնի է:

ՏԵՍԱԿԱՐՍՐ ԾԱՆՐՈՒԹԻՒՆ ԱՅԼԵՒԱՅԼ

ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ

Մ Ե Տ Ա Ղ Ն Ե Ր

ՄԵՒ. ԳԵՐԵՐ ԿԵՐ

Աղամանի	3.53
Երազատար (կործր քար մը)	1.87
Անագ (գալայ)	7.29
Արծաթ՝ ձուլածոյ	10.47
» 90 և պղինձ 10 (յարազագուած)	10.12
Արջր (Laiton = փրփինձ)	8.39
Բւաթիւն՝ ձուլածոյ	21.15

» կորզանէ քաշուած	23.00
Բնալեղ՝ ձուլածոյ (aluminium)	2.56
» կռածոյ	2.67
Բնակիր (calcium)	1.58
Բիւրեղ բնական (պիլլոր՝ մատէն = cristal de roche)	2.65
Գրչաքար (կռաթիւ)	2.33
Երկաթ կռածոյ (տէօյմէ տէմիր)	7.79
» ձուլածոյ. կարծր կամ ճերմակ (տէօքմէ տէմիր)	7.50
» ձուլածոյ կակուղ՝ սև	7.00
Զառիկ (արտէնիք)	5.75
Զինի՝ ձուլածոյ (թիւթեա կամ հլճ. պինկօ)	6.86
Զինի՝ թիթեղ	7.19
Լուսածին սովորական	1.84
» կարմիր	2.10
Լանտազինձ (պաքֆօն)	8.61
Մարրաքար (անթիֆօն)	6.71
Ծծումբ (քիւքիւրա) ձուլածոյ	2.03
Կաւիճ	1.28
Կապար՝ ձուլածոյ	11.35
Հանքածուխ՝ գանգուած (քիւլիւջէ)	1.33
Մանիշ (իօս)	4.95
Նիքէլ ձուլածոյ	8.28
» կռածոյ	8.67
Ոսկի՝ ձուլածոյ	19.26
» կռածոյ	19.36
Մզտապղինձ (գըզըլ այար = bronze)	9.24
Պղինձ ձուլածոյ	8.79
» թեղ	8.88
» կռածոյ	8.95
Պիամուլթ	9.82
Պողպատ (չէլիկ)	7.81
Չեչաքար (բօմբա թաշը)	0.91
Մնդիկ	13.58
Քօպպիթ	8.51

Փ Ա Յ Տ Ե Ղ Է Ն Ք (բաց օդին ջրցած)

Աքսաիա	0.78
Բարտի (գաղապ)	0.38
Եզեին	10.66
» Թրիէոտէի (գալատ)	0.44
Եզեհոս (ապանօզ)	1.15
Բնկուզենի	0.67
Թմի (օլլամուր)	0.52
Խնձորենի	0.80
Կնձի (orme = դարձապտիկ)	0.80
Մայրի	0.56
Կաղնիի կարծր (60 տարեկան)	1.17

Հացի (տիչպուտաք)
Կապի
Նոճի (սէրվի)
Շաքանակենի (քէսթանէ)
» 60 սաթեկանէն վեր
Աստի (չընար)
Առնի (մանթար)
Տանձենի
Տոտի
Փիճի (կիւրկէն)

Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Գ

Յարճապակի
Առ
Ալլակի
Աթի (քէհրպար)
Բաւա (մէրճան)
Փղակի
Մարմարին
Կապիթի
Պարփիւր (սուճաքի)
Կրաքար (պղտրական չինոթեանց)
Գաճաքար՝ փաշի
Հերճաքար = քարէտախտակ
Աճուխ՝ կապիթի
» փոշիացած
» բարտի (գալագ)
Բաւաչու
Ալլայ
Ճարպ, կարագ
Մեղրամոմ
Մաքդկային մարմին (միջին)

Հ Ե Ղ Ո Ի Կ Ն Ե Ր

Ալբու
Անկենդանական թթւում
Բեւեկնի խաւթիւն
Ծմբական թթւում
» եթէր
Կաթ
Ջուր՝ ծովու
Ջուր՝
Ձէթ
Սնդիկ
Պոտոի գիծի

Տեանենք հիմա թէ այս ցուցակով ի՞նչ-
պէս պիտի կրնանք մարմիններու խակակն
կամ տեսակարար ճանրութիւնը, ծաւալը,

0.84 գտնել: Երեք տեսակ խնդիրներ կը ներկա-
0.91 յանան մեր առջեւ. այսինքն՝ վերի երեք
0.60 արժէքներէն երկուքը միշտ ծանօթ ըլլալով
0.55 պիտի գտնենք երկրորդը՝ անծանօթը: Բայց
0.75 այս խնդիրներու հաշիւներուն մէջ մոռնալու
0.65 չէ նկատողութեան առնել, ճանրութեան
0.24 և ծաւալին մէջուղ գտնուած տանջութիւնը:
0.72 Կշիւի միութիւնը կրնայ փոխադրուիլ տեղին կամ
0.91 պարագային համեմատ. զոր որ՝ երբեմն
0.85 կաւմ, կամ քիւօ, կամ տակաւարդ (թօնօ)
կ'ըլլայ: Արդ՝ լոյս այս կշիւներու միութեանց
իւրաքանչիւրին համապատասխան, ծաւալի մասնաւոր միութիւն մը կայ:

Կաւմին համապատասխան ծաւալի միութեանն է, խորանարդ հարսդամէթըրը, (տանթիմէթըրը գիւպ), որովհետեւ ինչպէս ըսինք, մէկ խոր. հր. մէթըր ջուրը 1 կաւմ կը կշռէ. և քիլօկրամին կ'համապատասխանէ՝ խորանարդ տանորդամէթըրը (նոէսի-մէթըր գիւպ). որովհետեւ այսչափ ջուրն ալ կը կշռէ 1 քիւօ. և վերջապէս տակաւարդ գին ալ կը համապատասխանէ խորանարդ մեթըրը (մէթըր գիւպ), քանի որ մէկ խորանարդ մեթըր պարունակութեամբ ջուրը կը կշռէ 1000 քիւօ, կամ մէկ տակաւարդ:

Ուստի՝ մարմիններու խտութեան վերաբերեալ խնդիրներու մէջ, աջալըճօրէն նկատութեան առնելու է միշտ որ, եթէ կշիւը կաւմով ներկայացուած է, ծաւալը պէտք է արժեքներ խորանարդ հարսդամէթըրով. և եթէ կշիւը 10 քիլօկրամ է, ծաւալը խորանարդ տանորդամէթըրով, եւ. և այսպէս փոխադարձաբար: Եւ անշուշտ, երբ տաճարիւած խնդրոյն մէջ եթէ ծաւալ և կշիւ կարու համապատասխան չեն, ինչպէս խորանարդ տանորդամէթըրը կաւմի հետ, պէտք է խնդրոյն բուն գործադրութիւնը կատարել տալով, այդ երկու քանակները իրարու համարժէք դրլքի մը գնել. այսինքն՝ ի. տ. մեթըր ի. հր. մէթըրի վերածել, կշիւի միութիւնը կաւմը մնալով. կամ կաւմը քիլօի վերածել, ծաւալի միութիւնը ի. տ. մէթըրը մնալով:

Այս նախնական ծանօթութիւնները տալերէն վերջ, մէկ քանի գործնական օրինակներով պարզենք:

Օր. Ա. — Երկու մէթըր երկայն, իւրաքանչիւր կողմը 2.5 հ. մէթըր չափով, քառակու-

սի երկամբ ձագ մ'առնենք, որու ծառայի
հաւատարմ է $2,5 \times 295 = 737,5$ խ. համար
մեկի. կ'ազնեց գիտնալ թէ քանի՞ բնութիւն
կընէ և ճշտակցար ծախսութեանց արժեքներն
մէջ պիտի գտնենք որ, երկամբ ճշտակցար
ծախսութեան 7,79ն է. ասիկա կ'նշանակի
որ, հաւատարմ ծառայով, երկամբ ջուրն 7
տնգամ 79ը հարկարար աւելի կը կընէ ջու-
րէն և արժեքեանք ջուրի մէկ խմով. հր. մէկ-
թիւ կ'առնէ կը կընէ, ըսել է մէկ «ն. հ. մ.»
երկամբ պիտի կընէ 7 հաւամբ 79 հարկարար
և հետեւեալն. Երբ երկամբ ձագի կշիւր
հաւատարմ կշիւր ըլլայ $7,79 \times 12,5 = 9731$
կում, կամ 9 թիւ 737 կում:

Հոս տեսակարար ծախսութիւնը նշանա-
շիւն կընէ 7,79 զիւրութեան համար. բայց
երբ ուզուի օգնել ճշգրտութեան մօտենալ,
պէտք է նոյն ամեն 7,788ով կատարել գոր-
ծարարութիւնները, թէև ամեն երկամբ միեւ-
նոյն խառնութեան անփոփոխ չունի. որով եւ
7,79 իր սնք միւտ իրեն միջին ընդունիլ:

ՆԱՍՏԱՆԵՐ ԵՎ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

ԱՌ

ԻՄԲԱԿՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՅՈՒՄ ԹԻՒ 80, 81 և 82

Թիւ 80. — Թաշկինակի և նմանորինակ լա-
թերու միջոց ինչպէս և ինչ մեղանով կարելի
է տարածել (մօտեցնել) ձիւն ու տաքի տ-
առնել շուրուի:

Թիւ 81. — Կոնի վրայ լայնագոծ տաւեր
զրկուել, կամ անկողնոց գործակեր համար ինչ-
պէս ընկել է. որ դրոշմը չաւրուի:

Թիւ 82. — Հաւու օրից նոյն խալ հաւու
մաշկինն անշաղկապեալ, և հաւանայ ալի
միջտանի վրո՞ւ և մաքուր արհեստ համար
ինչ զարման կը յանձնարարէք:

Կա՛կե

ԻՄԲԱԿՐՈՒԹՅՈՒՆ

* *

ՊԱՅՄԱՆՈՒՆ

ձերմակեղենները տառանդելու համար
գործածուած մեղանները խիստ շատ են այ-
սօր, որոնց ընտրութեանը մէկ բանին
կը դնենք հոս:

Պատրաստեցէք հետեւեալ բաժնաբաժնի
զատ զապար:

Լուծաճառ Ա.

